



ԶԱՎԵԼ ԵՍԱՅԱՆ

Միլիտարի պարտեզները

ԳԼՈՒԽ Ա

Ծնած եմ 1878-ին, Փետրուար 4-5 (յունական տոմար) առաւօտեան դէմ, Կ. Պոլիս, Սկիտար, Միլիտարի պարտեզներ կոչուած թաղին մէջ:

Այդ նոյն գիշերը ռուս բանակը հասեր էր Սան Սթեֆանօ: Մայրս կը պատմէր որ ինքը երկունքի ցաւերու մէջ էր, երբ Փետրուար 4-ի երեկոյին, մունետիկներ թաղերէն անցնելով գոչեցին.

– Թնդանօթներ պիտի արձակուին, մի՛ վախնաք:

Անտարակոյս կառավարութիւնը կարծեր էր որ ռուսները պիտի ոմբակոծեն մայրաքաղաքը:

Մայրս կը պատմէր որ այդ օրը ձիւնի բուռն փոթորիկ մը բարձրացաւ եւ որ տեսեց ամբողջ գիշերը: Մարդիկ տուններէն դուրս չէին կրնար ելլել, շնչասպառ կ'ըլլային: Յոյն դայեակը, որ մայրս կը խնամէր, Գատրգիտ կը բնակէր: Ոչ մէկ կառապան կը յօժարէր ձիերը լծել կառքին: Երանիկ մօրաքոյրս կ'աւելցնէր որ ամէն բանի վրայ հայրս տունը չէր եւ Տիգրան մօրեղբայրս տուն եկեր էր գինով վիճակի մէջ, «մէկ պատը ինծի, մէկ պատը քեզի...» եւ կէս ժամ տեսեր էր, մինչեւ յաջողեր էին հասկցնել անոր որ պէտք էր ճար մը գտնել, յոյն դայեակը բերել Գատրգիտէն:

Տիգրան մօրեղբայրս նետուեր էր փողոց, անցեր էր Հայտար Փաշայի գերեզմանոցէն եւ քանի մը անգամ ճամբան կորսնցնելով, ձիւնի փոթորիկին կուրծք տալով, վերջապէս հասեր էր Գատրգիղ, յոյն դայեակը հաներ էր անկողինէն եւ թեւէն բռնած քշեր բերեր էր Սկիւտար:

Մայրս կը պատմէր նաեւ որ կէս գիշերը անց, յոյն դայեակը եւ հայրս կրակարանին շուրջ նստած, սպասելով երեխայի ծննդեան, բուռն վիճաբանութեան բռնուեր էին իրարու հետ: Դայեակը այն յոյսը կը սնուցանէր որ երբ ռուսները գրաւեն մայրաքաղաքը, «քրիստոնեաները պիտի ազատագրուին», մինչ հայրս ռեւէ լաւ բան չէր սպասեր ռուս բանակի յաջողութենէն:

Ես ծնեմ եմ վտիտ եւ վատուծ: Տիգրան մօրեղբայրս նորածինը տեսնելով գոչեր է.

– Աս ալ չոճո՞վիս է, պէ՛... կարծես քիչ մը փրփուր է. մե՛ղք քաշած նեղութեանս...:

Մինչեւ ութ-ինը տարեկանս Տիգրան մօրեղբայրս դեռ ինձ կ'անուանէր փրփուր:

Արդարեւ, մինչեւ այդ տարիքները եղած եմ շատ տկար, ենթակայ ամէն տեսակ մանկական հիւանդութիւններու եւ շարունակ տատանուեր եմ մահու եւ կենաց մէջ: